

SEIU Տեղական 2015 Միության Որոշումը Հակա-Ռասիստական Կազմակերպություն Դառնալու Վերաբերյալ

Արդարություն Բոլորի Համար իրականացնելու նպատակով մենք պետք է դիմակայենք ամերիկյան պատմության թողած վատագույն ժառանգություններին: Դա նշանակում է, որ պետք է բախվենք Եվրոպական գաղութատիրության ատլանտյան ստրկատիրական առևտրի տևական հետևանքների հետ: Ստրկատիրությունը երկրի օրենքն էր հանդիսանում 397 տարիներից 246 տարիների ընթացքում՝ առաջին վերաբնակիչների ժամանումից ի վեր այն հողում, որը դարձավ Միացյալ Նահանգներ, 361 տարիներ շարունակ Պուերտո Ռիկոյում, 206 տարի շարունակ Կանադայում և 387 տարի շարունակ Բրազիլիայում, որը վերջին երկիրն էր արևմտյան աշխարհում, որն արգելեց այդ օրենքի պրակտիկան:

Սևամորթ մարդկանց հանդեպ հարյուրավոր տարիներ շարունակ դաժան վերաբերմունքն ու հսկողությունը թողել է անհերքելի և հարատև հետք: Սևամորթների մեծամասնությունը իրենց աշխատանքի դիմաց վաստակում են կենսական աշխատավարձից քիչ: Հարստության կուտակումը քիչ է կամ բացակայում է սերունդներ շարունակ: Սևամորթներն ամեն օր պայքարում են հանուն արժանապատվության, հարգանքի և սովորական մարդկային իրավունքների՝ առերեսվելով աշխատուժի և աշխատանքային խտրականության հետ, ոստիկանների կողմից ահաբեկումներին և բռնությանը և համակարգային զանգվածային անկումներին: Մեր ժառանգություններից ամենադաժանը կարելի է կտրուկ ձևով նկատել այս կայուն և տարածված կառուցվածքային ռասիզմ

Ի մեջ, որն ազդում է ամբողջ կիսագնդի սևամորթ մարդկանց վրա: Սևամորթ մարդկանց հանդեպ այս փորձառությունը, որը դարեր շարունակ անցել է մայրցամաքներով, ապացուցում է, որ այդ տնտեսական հավասարությունը և ռասայական հավասարությունը հիմնականորեն փոխկապակցված են:

Այսօր մեր տնտեսական համակարգն արտացոլում է այս ժառանգության ամենավատ կողմերը: Շահութաբեր կորպորացիաները նվազեցնում են աշխատավարձերը՝ պատճառ հանդիսանալով, որպեսզի ավելի քան 64 միլիոն մարդիկ իրենց աշխատանքի դիմաց վաստակեն ժամական \$15-ից պակաս աշխատավարձ: Անգամ մի քանի աշխատանք ունենալու դեպքում մարդիկ չեն կարողանում ծայրը ծայրին հասցնել՝ անկախ նրանից, թե որքան ծանր աշխատանք են նրանք կատարում: Նրանցից շատերը գունավոր մաշկ ունեն՝ հանդիսանում են ստրուկների կամ վերաբնակիչների սերունդներ:

Սա զուգադիպություն չէ: Ոչ ոք դա ավելի լավ չէր հասկանա, քան գունավոր մաշկ ունեցող կանայք, ովքեր տնային խնամք էին ցուցաբերում տարեցների և հաշմանդամություն ունեցող մարդկանց հանդեպ դեռևս մինչև այդ բնագավառում որևէ չափանիշներ հաստատելը: Խնամք և կարեկցանք՝ անկախ այն փաստից, որ աշխատանքային անհավասար օրենքները պատմության ընթացքում ժխտել են կանանց սովորական իրավական պաշտպանությունները և նույնիսկ նվազագույն աշխատավարձի իրավունքը: Այս «տնային» աշխատանքներն ավանդաբար իրականացվել են հարավի սևամորթ կանանց կողմից և համարվել են ոչ արժանի սովորական աշխատավորական իրավունքներից օգտվելու համար: Այս կանայք պայքարում էին ռասիզմի դեմ, որն առանձնացնում էր նրանց աշխատանքը որպես անհավասար, կողմորոշված մեր աշխատանքային օրենքներով: Այդպես նրանք ստեղծեցին առաջին տնային խնամքի միությունը՝ ճանապարհ հարթելով հազարավոր այլ տնային խնամակալների համար, որպեսզի նրանք միանաին SEIU-ին և բարելավեին իրենց կյանքը և այն մարդկանց կյանքն, ում հանդեպ նրանք ամեն օր խնամք են ցուցաբերում:

հաստատված

Տասնամյակներ շարունակ մեր միությունը պայքարել է բոլոր մարդկանց համար արդարություն հաղթանակելու համար՝ բարձրացնելով աշխատավարձերը և բարելավելով նրանց ընտանիքների կյանքը: Եւ այժմ արդեն պարզ է, որ միայն դա բավարար չէ: Միությունների կատարած աշխատանքը չի վերացրել ռասիզմը և անհավասարությունը: Իրականում, մենք երբեք չենք հասնի տնտեսական արդարության բոլոր մարդկանց համար՝ առանց ռասայական արդարություն իրականացնելու սևամորթների, թխամաշկների, ասիական ծագման ամերիկացիների և խաղաղօվկիանոսյան կղզաբնակների և բնիկ համայնքների համար:

Քանի որ, SEIU Տեղական 2015 Միությունը Կալիֆորնիայի 400,000 բազմազան երկարատև ինամքի աշխատողների միություն է, որը հիմնականում բաղկացած է սևամորթներից լատինացիներից, API-ից և այլն,

Քանի որ, միջին սպիտակամորթ ընտանիքը 41 անգամ առավել հարուստ է, քան միջին սևամորթ ընտանիքը և 22 անգամ ավելի հարուստ է, քան միջին լատինացի ընտանիքը, և

Քանի որ, անօթևան մարդկանց 78.3%-ը գունավոր մաշկ ունեցող մարդիկ են, և

Քանի որ, չնայած սևամորթ մարդիկ կազմում են Կալիֆորնիայի բնակչության 6.5%-ը, սակայն ներկայացնում են նահանգի աղքատության 20%-ը և նահանգի անօթևան բնակչության 40%-ը և

Քանի որ, լատինացի երեխաները կազմում են նահանգի երեխաների մոտավորապես կեսը (53%), սակայն նրանք հանդիսանում են երեխաների 81%-ը, ովքեր բնակվում են ամենաաղտոտված տարածքներում, և

Քանի որ, սևամորթ մարդիկ ենթակա են մոտավորապես 56% առավել աղտոտվածության, քան այն պայմանավորված է դրանց սպառմամբ: Լատինացիների համար այն փոքր-ինչ բարձր է՝ 63%, և

Քանի որ, գունավոր մաշկ ունեցող աշակերտներն առավել հաճախ են դպրոց հաճախում ոստիկանների ներկայությամբ՝ մեծացնելով հավանականությունը, որ նրանք կհայնտվեն քրեական արդարադատության համակարգում, և

Քանի որ, ամբողջ պետության սահմաններում սևամորթ տղաները առավել վտանգված են, երեք անգամ առավել հավանական է, որ կձերբակալվեն դպրոցում, քան նրանց սպիտակամորթ դասընկերները, և

Քանի որ, ավագ դպրոցից դուրս թողնված սպիտակամորթ երեխաներն առավել հարուստ են, քան սևամորթ և լատինացի քոլեջի շրջանավարտները, և

Քանի որ, ռասայական անհամաչափության ազդեցությունը հստակ երևում է անչափահասների արդարադատության համակարգում: Մինչ սևամորթ երիտասարդները ներկայացնում են ընդհանուր բնակչության իրենց տարիքային խմբի 17%-ը, նրանք նաև ներկայացնում են անչափահասների ձերբակալությունների 46%-ը, անչափահասների դատարան դիմելու 31%-ը և չափահասների դատարանից հրաժարվելու 41%-ը, և

Քանի որ, կանանց փոքրամասնությունը ունենում են կրծքագեղձի քաղցկեղի ավելի ցածր մակարդակ, սակայն առավել հաճախ են մահանում հիվանդություններից, և

Քանի որ, Միացյալ Նահանգների գունավոր մաշկ ունեցող կանայք զգալիորեն ավելի վատ են գոյատևում, քան վերարտադրողական առողջապահության յուրաքանչյուր բնագավառի սպիտակամորթ կանայք: Սևամորթ կանայք մոտավորապես չորս անգամ առավել հավանականություն ունեն մահանալու երեխա ծնելու ժամանակ, քան սպիտակամորթ կանայք,

հաստատված

Այդ իսկ պատճառով որոշվում է, որ

1. SEIU Տեղական 2015 Միությունը հանձն է առնում լինել *Հակա-Ռասիստական Կազմակերպություն*՝ որպես ռասայական արդարության համար տարվող աշխատանքի մեր նպատակ: Ռասայական անհավասարություններն ազդում են մեր ամբողջ արդարության օրակարգի վրա, այդ իսկ պատճառով, մենք չենք կարող հաղթանակել *Արդարություն Բոլորի Համար*՝ առանց ռասայական հավասարության:
2. SEIU Տեղական 2015 Միությունը ակտիվորեն կաշխատի աննկատորեն միավորելու տնտեսական և ռասայական արդարությունները և վերացնելու ռասիզմը և ստեղծելու հավասարության կուլտուրա կազմակերպության ներսում և աշխարհում՝ փոփոխելով և փորձության ենթարկելով համակարգերը, կառույցները, օրենքները, փորձառությունները, արժեքներն ու քաղաքականություններն այնպես, որպեսզի իշխանությունը հավասարապես վերաբաշխվի և կիսվի:
3. SEIU Տեղական 2015 Միությունը հանձն կառնի և կաջակցի գունավոր մաշկ ունեցող մարդկանց հզորացման գործին՝ նորմերի, քաղաքականության, ընթացակարգերի և պրակտիկայի վերափոխման միջոցով:
4. SEIU Տեղական 2015 Միությունը կաջակցի սպիտակամորթ մարդկանց, երբ նրանք ջանք գործադրեն հասկանալու իրենց պատասխանատվությունն ու մասնակցությունը ռասայական արդարադատություն ստեղծելու հարցում:
5. SEIU Տեղական 2015 Միությունը համաձայն է, որ, հակառասիստական կազմակերպություն դառնալու նպատակով, մենք պետք է իրականացնենք հետևյալը՝
 - a. *Հավաքել Տվյալներ – Հասկանալ Անդամության Վրա Ունեցած Ազդեցությունը:* Որպեսզի հասկանանք, թե որտեղ ենք կանգնած որպես հակառասիստական կազմակերպություն և գիտակցենք մեր անդամության վրա ռասիստական անհավասարության ազդեցությունը, մենք պետք է գնահատենք մեր անդամությունը: Մենք, SEIU Տեղական 2015 Միության Համագումարի և Տարածքային Ժողովների Ժամանակ հարցաթերթիկների միջոցով ռասայական արդարադատության վերաբերյալ տվյալներ կհավաքենք մեր անդամությունից:
 - b. *Ռասայական Արդարադատության Անդամների Հանձնաժողով:* Որպեսզի վերլուծենք և որոշենք հաջորդ քայլերը՝ հիմնվելով անդամների հարցումների տվյալներ վրա, մենք կստեղծենք անդամներից կազմված ռասայական արդարության հանձնաժողով: Հանձնաժողովը կհաստատվի հավասարության հիմունքով:
 - c. *Քաղաքականությունների և Ընթացակարգերի Ներքին Ակնարկ:* Տեղական Միությունը կանցկացնի մեր ներքին քաղաքականությունների և ընթացակարգերի մանրամասն ուսումնասիրություն աշխատանքի ընդունման, անձնակազմի զարգացման և մատակարարների ընտրության հարցում, որպեսզի գնահատական անցկացնենք այն մասին, թե արդյոք մենք գործում ենք որպես Հակառասիստական Կազմակերպություն: Գնահատականի հիման վրա առաջարկությունների փաթեթ կներկայացվի Ղեկավարներին, որպեսզի նրանք այն ուսումնասիրեն և հաստատեն:
 - d. *Կրթություն և Ուսուցանում:* Անձնակազմի և Գործադիր Խորհրդի բոլոր անդամները կմասնակցեն ներածական սեմինարին, որը կվերաբերի մեր՝ հակառասիստական կազմակերպություն հանդիսանալու նպատակով տարվող աշխատանքին և ռասայական արդարությունը կներառվի բոլոր ուսուցանումներում և կրթական սեմինարներում: